ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2021թ. թիվ 296-Ա

Դ.ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետը և Լորուտ համայնքի բնակիչ Ն.Այդինյանի դիմումը, հաշվի առնելով Դ.Սարգսյանի բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի դրույթները խախտելու և դպրոցում քաղաքական գործունեություն կամ քարոզչություն իրականացնելու համար «ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Դավիթ Սարգսյանին 2021 թվականի հունիսի 11-ից ազատել զբաղեցրած պաշտոնից և լուծել 2017թ. մարտի 14-ին նրա հետ կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Լորուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Դ.Սարգսյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝ որոշումն ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը առձեռն կամ պատվիրված փոստով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

6/11/2021

X

ԳՈՌ ԱՍՐՅԱՆ

Գ.ԱՍՐՅԱՆ

2021թ. հունիսի 11
ք.Վանաձոր